Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ (Ընկերություն) և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 24-ի վրա, որտեղ ներկայացված է COVID-19-ի ազդեցությունը: Մեր կարծիքը

չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ

հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

27 մայիսի 2020թ.

Լիլիթ Արաբաջյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	32,491,714	33,404,594
Օգտագործման իրավունքով ակտիվներ	5	6,128,209	6,934,139
Ոչ նյութական ակտիվներ	6	9,503,276	6,550,477
Տրամադրված փոխառություններ	7	17,770,811	638,689
Հետաձգված հարկային ակտիվներ	8	3,006,695	2,883,315
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	650,230	1,109,290
Բանկային ավանդներ	10	959,400	967,500
		70,510,335	52,488,004
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	2,204,133	1,932,776
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	4,885,991	9,528,488
Տրամադրված փոխառություններ	7	-	3,450
Կարճաժամկետ վարկեր աշխատակիցներին		306,100	289,332
Բանկային ավանդներ	10	11,977,005	8,230,693
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	12	4,052,127	27,319,950
		23,425,356	47,304,689
Ընդամենը ակտիվներ		93,935,691	99,792,693

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ

	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	13		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		77,340,445	81,919,825
		77,972,945	82,552,325
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	14	5,509,992	5,983,578
Պայմանագրային պարտավորություններ	15	90,275	106,435
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	-	890,100
		5,600,267	6,980,113
Ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	14	1,429,386	1,301,990
Պայմանագրային պարտավորություններ	15	1,362,194	1,440,582
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	7,406,857	7,517,683
Շահութահարկի գծով պարտավորություններ		164,042	-
		10,362,479	10,260,255
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		93,935,691	99,792,693

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. մայիսի 27-ին:

Ռալֆ Յիրիկյան
Գործադիր տնօրեն

Արթուր Երմալիոնակ
Ֆինանսական և հաշվապահական բաժնի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերաներկայացված)
Պայմանագրային հասույթ			
Շարժական կապի ծառայություններ	17	49,058,686	51,032,925
Ֆիքսված կապի ծառայություններ		1,381,835	1,538,015
Ապրանքների վաճառքից հասույթ		5,949,825	5,198,269
Այլ հասույթ		274,711	128,039
Այլ եկամուտ			
Այլ գործառնական եկամուտ		470,200	608,202
		57,135,257	58,505,450
Մաշվածություն և ամորտիզացիա		(12,992,182)	(14,235,819)
Փոխկապակցման և ռոումինգի ծախսեր	18	(6,042,028)	(7,043,368)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(8,896,599)	(7,440,460)
Ցանցի շահագործման այլ ծախսեր	19	(5,434,643)	(5,197,696)
Կառավարման և խորհրդատվական վճարներ		(328,515)	(2,545,351)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(5,305,033)	(4,723,293)
Այլ գործառնական ծախսեր	20	(4,426,859)	(6,269,682)
		(43,425,859)	(47,455,669)
Գործառնական գործունեությունից շահույթ		13,709,398	11,049,781
Ֆինանսական եկամուտ	21	1,240,057	794,330
Ֆինանսական ծախս		(969,460)	(854,952)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս), զուտ	22	(374,732)	81,623
Շահույթ մինչև հարկերը		13,605,263	11,070,782
Շահութահարկի գծով ծախս	23	(3,184,643)	(1,237,042)
Տարվա շահույթ		10,420,620	9,833,740
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		10,420,620	9,833,740

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	81,709,284	82,341,784
Տարվա շահույթ (վերաներկայացված)	-	-	9,833,740	9,833,740
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք (վերաներկայացված)	-	-	9,833,740	9,833,740
Շահաբաժիններ	-	-	(4,500,000)	(4,500,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(4,500,000)	(4,500,000)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	550,000	82,500	81,919,825	82,552,325
Տարվա շահույթ	-	-	10,420,620	10,420,620
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	10,420,620	10,420,620
Շահաբաժիններ	-	-	(15,000,000)	(15,000,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(15,000,000)	(15,000,000)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	77,340,445	77,972,945

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	10,420,620	9,833,740
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	12,993,804	14,250,757
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	219,080	357,263
Շահութահարկի գծով ծախս	3,184,643	1,237,042
Ֆինանսական եկամուտ	(1,240,057)	(794,330)
Ֆինանսական ծախս	969,460	854,952
Շնորհներից եկամուտ	-	(138,767)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	374,732	(81,623)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	26,922,282	25,519,034
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	3,151,695	5,594,946
Պաշարների փոփոխություն	(271,357)	141,605
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(16,768)	(29,096)
Պայմանագրային պարտավորությունների փոփոխություն	(94,548)	(231,629)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(1,089,544)	1,401,614
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	28,601,760	32,396,474
Վճարված տոկոսներ	(969,460)	(854,952)
Վճարված շահութահարկ	(2,206,900)	(1,525,142)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	25,425,400	30,016,380

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(12,370,106)	(13,381,947)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	26,893	69,786
Կապակցված կողմերին տրամադրված փոխառություններ	(16,700,601)	-
Տրամադրված փոխառությունների մարում	3,450	10,126,645
Ստացված տոկոսային եկամուտ	873,482	7,657,213
Ավանդների ներդրում	(11,230,000)	(11,118,655)
Ավանդների մարում	7,366,540	6,828,830
Ներդրումային գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(32,030,342)	181,872
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(1,288,320)	(1,541,485)
Շահաբաժինների վճարում	(15,000,000)	(4,500,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(16,288,320)	(6,041,485)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(22,893,262)	24,156,767
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(374,561)	48,380
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	27,319,950	3,114,803
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	4,052,127	27,319,950

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 52-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: